ن. ت
1351

Յաւելուած «ԱՐԵՒ. ՄԱՄԼՈՅ» — 1882 մայիս ամսոյն:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳԱՅ ԱԹՈՎԵԱՆՑ

ԶՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԵԱՆ
ՐԷՇԻՏԻԷ-ՃԱՐՇԸՍԻ 63.
1882

Ա. Կ.
1351

Ա.Ն
1351

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳԱՅ ԱՌՈՎԵԱՆՑ

2Ֆ-1359

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

13 51-81

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ*

ԳԷՈՐԳԱՅ ԱԲՈՎԵԱՆՑ

ՆՈՒԷՐ

ԻՒՐ ԱՆՄԽԻԹԱՐ ՄՕՐՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ԱԲՈՎԵԱՆՑԻՆ

Ոչ մատուռ նրանց գլխին կանգնեցաւ
Ոչ արձան նրանց անունը թողեց.
Վէրք Հայաստանի. Խ. ԱԲՈՎԵԱՆ

Մինչ կամենում էինք փառաւորել քո անունն՝ պատմական երկասիրութեամբդ, ով սիրելի Գէորգ, գժբաղդաբար քո անակնկալ անյայտութեան և ոչ թէ բնական մահուան կենսագիր ենք լինում։ Մինչ կամենում էինք Հայոց Պատմութեան և Աշխարհագրութեան աշխատասիրութիւնդ քեզնից նուիրած տեսնել քո մրաջան մօրը †,

* Բազմաթիւ տարիներ առաջ մեզի ղրկուած էր այս կենսագրութիւնն՝ առելի ընդարձակ տեղեկութիւններ՝ այս մասին՝ հաղորդելու խոստմամբ։ Բայց որովհետև ցարդ այդ տեղեկութիւնները չհասան մեր ձեռքը, արժան դատեցինք ձեռքերնիս գտնուածները հրատարակել։ Ծ. Խ.

† Այս տիկինն է Լօռու Նահանգի Օձուն գիւղից, մի հասարակ շինականի դուստր։ Հարսնանում է Աբովեան Կարապետին, երեսուն տարեկան հասակում այրիանում է, մայր լինելով երեք տղերաց և մի դստեր, ինքն խոհեմ, քաղցր, պարզ կին, թողնում է իւր գիւղը և իւր երկ-

քո կենսագրութիւնն է նուիրվում նրան այլոց ձեռքով։ Բայց դու, անմահ հոգի, եթէ քո հայրենասէր և ծնողասէր զգացմունքներն ամբիոնի թարգման և արժանաւոր նկարագիր լինել կարողացած չ՝ենք։ Ներողամիտ լեր, որովհետև մեր զգայմունքն առ քեզ և բուն իրողութիւնն առաւել կը խօսին քան մեր մի քանի տողերը։ Քո հոգին առաւել կ՝ողևորի և կ՝ազդէ հայրենասէր սրտերին անմահ պահել յիշատակդ, քան մեր ցաւակցական կենսագրութիւնն։ Դու արդէն գովեստ որոնող չէիր և մենք կամք չունինք քեզ գովելու։ Մենք կենսագրութեանդ համառօտ գծերը միայն նշանակում ենք, հաւատալով թէ՝ ոչ անյայտութեամբ և ոչ իսկ մահուամբ չէ անհետանում և կորչում հայրենասէր մարդու անունն, ինչպէս քո անունն ևս միշտ պիտի մնայ տարեգրութեան մէջ։

Տփխիս, 25 մայիս 1867։

որքանց լրջութեան պատճառաւ փեղափոխվում է Տփխիս, ուր՝ իր յեռեռգործունեամբն՝ երկու որդոցը դաստիարակում է Ներսիսեան դպրոցը, որոց մէջն է Զատիր՝ բեռական հանգուցուցանեմբ վաճառական, իսկ մեծն Բաղատար, որ Ներսիսեան դպրոցում առարկելէց յետոյ, ընդունում է Պիսմանչեան (Արքունի Ուսումնարան), այն դեղից ևս վկայութիւնով հինգերորդ դասարանից դուրս գալով՝ ճանապարհորդում է ի Պարսկաստան և ի Տաճկաստան։

ԳԷՈՐԳ ԱՐՈՎԵԱՆՑՆ է որդի Կարապետ Արովեանցի և Եղիսաբէթ Օհանջանեանի։ Սա ծնաւ թարեկան հասակումը (1844 թ.) որբանում է հօրով, ուրբ թարեկան հասակումը (1845 թ.) իր պապ Աբազի շնորհիւը յանձնվում է Սարգիս վարդապետին դաստիարակութեան համար Սանահնայ վանքի ուսումնարանումը։ Գէորգ իր աշխոյժութեամբ և բնական ձիրքով կարճ միջոցում ցոյց է տալի մեծ յառաջադիմութիւն, որով սիրելի է կացուցանում իր անձը թէ դաստիարակին և թէ իր ընկերացը, որ և իր քաղցր բնաւորութեան և ուսումնասիրութեան պատճառաւ մականուանում էին Անուշաւ։ Գէորգ իր գեղեցիկ յատկութեանց հետ լինում է միանգամայն քաղցրաձայն, այնպէս որ նոյն դաւառի ժողովուրդը ուխտաւորութեան ժամանակ զմայլում էին նորա քաղցր երգեցողութեան վերայ։ Երկու տարիից յետոյ՝ Սարգիս վարդապետի շնորհիւ և իր ապագայ հանճարի յաջողութեամբ բերվում է Ներսիսեան Հոգևոր դպրոցը 1847 թուականին։ Այս տեղ ևս առաւել կրկնապատկում է իր աշխատութիւնը և յառաջադէմ աշակերտներից մինն է համարվում, այնպէս որ երկու տարուայ միջոցում բոլոր աւանդուած առարկայից մէջ գերազանցվում է, առաւելապէս Հայոց Պատմութեան և Գրականութեան մէջ. հետևապէս Ներսէս Կաթողիկոսը տեսնելով այս աշխոյժ պատանոյ վառ եռանդը, շատ անգամ իր սովորութեան պէս սեղանակից է անում իրան և պարգևներ բաշխում օրհնելով՝ թէ մանկանը և թէ նորա խնամակալու Սարգիս վարդապետին։ Երկու տարիից յետոյ 1849 թուականին ընտիր վկայագրով այլոց հետ ուղարկվում է Ներսէս Կաթողիկոսից Լաղարեանց ճեմարանը առաւել կատարելագործութեան։ Այն տեղ ևս իր բնական հանճարով շարունակում է իր ուսման ընթացքը հինգ տարի մինչև 1854. և արդէն վերջին տարիներումը որոշելով իր նպատակը՝ դարձնում է ուշքը լեզուա-

գիտութեան՝ Լատինական, Ֆրանսիական, Գերմանական, առաւելապէս Հայկական, անարիւն ճպուռի պէս գիշեր ցորեկ կրկնապատկում է իւր ջանքը իւրեան սեպհականելու, մանաւանդ գերմանական և ֆրանսիական լեզուները, որք կարեւոր էին և յարմար իւր նպատակին, այն է պատմաբանական և աշխարհագրական գիտութեանց։ Յաջողում է ստանալու իւր ցանկացած գիտութիւնները, ըստ որում իւր ջանքը լցուցանում է այն պակասութիւնները, որ ունէր Լազարեան ճեմարանը, մանաւանդ առաջնորդ է բռնում իրան այն բարեմիտ և գիտնական անձանց, որք թէև գործ չեն ունենում, ըստ ուսումնական մասին, ճեմարանումը, այնու ամենայնիւ բացում են իրանց գուները և օգնում հայ պատանիներին առանձնապէս յառաջանալու։ Իւր տքնաջան աշխատութեան պատճառաւ և օդի անյարմարութեան, տկարանում է Աբովեանցն, և տանվում է հիւանդանոցը, ուր ամբողջ տարի ու կէս մնում է, այն տեղ ևս չէ դադարում, ստանում է, որքան կարելի էր, թէ ձեռագրեր Հայոց Պատմութեան վերաբերեալ, և թէ տպեալ գրքեր գիտնական Էմինից և այլ զանազան գիտնական անձինքներից։ Ընթերցասիրում է անդադար ինչ որ կարեւորն է և պատշաճաւորն։ Տկարութեան ծանրութեան պատճառաւ՝ բժշկական խորհրդով դադարում է ընթերցանութիւնը, առնվում են բոլոր գրքերը և ուղարկվում է ճեմարանի կառավարութիւնից՝ Նոր Նախիջեւան, օգափոխութեան համար. այն տեղ ևս փոքր ինչ կազդուրուելով առողջութեամբ, սկսում է ճանապարհորդել ռուսիական վիճակում գտնուած քաղաքները, տեսնում է նոցա դրութիւնը, մտնում է զանազան տուներ, հարցասիրելով՝ ուր գտնվում էին Հայոց հին գրքեր, ընթերցասիրում է և բարեսիրտներից գրքեր է վերցնում, ապա վերադառնում է Լազարեան ճեմարանը։ Այն տեղ աւարտելով իւր ուսման ընթացքը, ստանալով օրինաւոր վկայագիր ուսման, վերադառնում է 1857 թուականին Սարգիս Եպիսկոպոսի հետ Տփխիս, որ այն միջոցին այն տեղ էր գտնվում։

Ահաւասիկ ուսմանց վկայագրին հետ՝ նաև իր ծննդեան վկայագիրն, որոց մին իւր կենսագրութեան և միւսն իւր ուսումնական աշխատութեան վրայ բաւական լոյս են սփռում։

Ա. ԾՆՆԴԵԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց, տուաւ այս համաձայն օրագրական սահմանադրութեան Վրաստանի և Իմէրէթի Հայոց վիճակային Կոնսիստորի, որ յ30 Մայիսի այսր 1852 ամի, հիմնեցելոյ 'ի վերայ խնդրագործութեան Օձուն գեղջ բնակիչ Ներսիսի տէր Բարսեղեան Աբովեանց, առ այն թէ՝ որպէս տեսանի 'ի հաւաքեալ օրինաւոր եղանակաւ հաւաստութեանց՝ հօր եղբօր որդի նորա Գէորգն ծնեալ է յօրինաւոր ամուսնութենէ հօրն իւրոյ Կարապետի Աբովեանց ընդ Եղիսաբէթի Օհանջանեանց, յեօթն ապրիլի հազար ութն հարիւր երեսուն և եօթն ամի (յ7Ն Ապր. 1837 ամի), որ և փարատեալ մկրտեալ է 'ի տասն և ութն նոյն ամսոյ և ամի, ընդ ձեռն հանգուցեալ Դաւիթ քահանայի Գալստեան 'ի Ս. Աստուածածին (Խաչգոմտ) եկեղեցւոջն Օձնայ, որոյ կնքահայրն եղեալ է Խաչատուր քահանայն Ջանինեանց. 'ի ստուգութիւն որոյ վկայէ Կոնսիստորս ստորագրութեամբ անդամոյ և դրոշմամբ արքունի կնքոյ 30 Յունիսի 1852 ամի Թիֆլիզ:

Անդամ Կոնսիստորի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՌՈՒՍԴ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՐԳՍԵԱՆՑ

(տեղի կնքոյ) Ատենադպիր ՎԱՐԴԱՆԵԱՆՑ

Բ. ՎԿԱՅԱԳԻՐ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Ի Լազարեան Ճեմարանէ Արեւելեան լեզուաց տուաւ այս վկայագիրն անդամոց խորհրդակցութեամբ, Գէորգ Աբովեանցին, Լօռու նահանգի Օձնու գիւղացու, որ նա Յունուար ամսի 1851 թուականին ընդունեցաւ որդեգրաց թվումը, ուր գերազանց վարքով վերջացրեց լրիւ գիմնազիական ուսման ընթացքը. ուսանելով կրօնագիտութիւն, Ռուսաց և Հայոց գրականութիւն, իրաւաբանութիւն, մաթէմաթիքական փիտութիւնք, բնագիտութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, գաղղիական, գերմանական և լատինական լեզուներ, և իւր գերազանց յառաջադիմութեան համար, ըստ վճռոյ Ուսումնական Խորհրդոյ Ճեմարանի կայացելոյ, Յուլիսի 9 1857 ամի, տըրվում է այս վկայագիրն, որ ըստ 2դ յօդուածոյ § 69 յաւելուածոյ օրինաց քաղաքացոյն հաստատութեան 21 Դեկտեմ. 1849 ամի, նոյն Աբովեանցն ստանում է իրաւունք մտանելոյ արքունական ծառայութիւն ուր և կամենայ:

Պաշտօնակատար Ուսումնական Կառավարութեան

(տեղի կնքոյ) Աստիճանաւոր ՆԻԿՈՂԱՅՈՍ

Տեսուչ աստիճանաւոր ՆԻԿԻՑ ԷՄԻՆ

Գէորգ Աբովեանը գալով Տփխիս, տեսնում է Ներսէս Կաթողիկոսն և խանդաղատվում, մանաւանդ տեսնելով որ հիւսիսային սառնամանիքը չեն կարողացել սառուցանել նորա հայրենասիրական եռանդն, այլ առաւել առիթ են տուել ջերմանալու և ամուր մնալու իր արիւնով գնած և կնքով կնքած հայրենեաց սուրբ աւանդութեանց, ծիսից, արարողութեանց մէջ, ըստ քաղաքական մասին։ Տփխիսումն նա՝ ուսումնարանական շրջանը փոխում է Աբովեանցն ընդհանրականի. այն մտքերը, որ յղանում էր երկար ժամանակ, սկսում է տարածել. Թողնում է բոլոր կենսական զուարճութիւնները, աշխարհքի փառք ու պատիւ, մեծ աստիճանի ձգտումն և իրան մասն ու բաժին է ընտրում Հայոց Ազգը, նուիրում է իր անձը պատրաստական ծառայ նորա պատմութեանը և աշխարհագրութեանը։ Ուսուցանում է և ուսանում, մխիթարում է և մխիթարվում, լացացնում է և լալիս, և ապա յօրինում ապագայից համար Աշխարհագրութիւն և Պատմութիւն Հայոց։ Սկսում է ծանօթանալ Ազգի սակաւաթիւ ընտիր և բարեմիտ անձանց հետ, խորհրդակցում է և խորհուրդ ստանում։ Օտարազգի բարեմիտ գիտնական հայրենասիրաց հետ սերտ կապակցութիւն է շարունակում, որոնցից շատերն արդէն Խուժաստան են աքսորուած։

1858 Թուականից սկսում է դասախօսութիւն Ներսիսեան դպրոցում, որի առաջին նպատակն էր ուսուցանել պատմութիւն և աշխարհագրութիւն թէ Հայոց և թէ ընդհանուր ազգաց՝ հայրենի լեզուաւ. նմանապէս գիշերօթիկ դպրոցներում և տներում կատարում է իր պաշտօնը ամենամեծ ջերմեռանդութեամբ, ցոյց է տալի մեծ յառաջադիմութիւն. բայց ի դասերից վերջնում է ձրիաբար ազատ ժամեր և ուսուցանում է ազգային երգեր, որ առաւել հայրենասիրական զգացմունքներ զարթուցանելու և վառելու միջոց էր համարում։ Նոյնպէս սկսում է երգեր յօրինել եւրոպական խառն ընդ հայկական եղանակի, որ այժմ ընդհանրացած է ժողովրդեան մէջ և երգվում է մեծ հաճութեամբ ու սիրով. Թատրոնական բեմերի վրայ ևս երևում է նա, թէ անձամբ դեր կատարելով և թէ իրանից յօրինուած երգերն երգելով։

Վերջին ժամանակումը 1864 Թուականին Ռուսաց Ուսումնական

Տեսչութիւնն, որոյ գլխաւորն էր Նեվերովը, արգիլեց ընդհանրապէս որ ոչ մի անձն իրաւունք ունի դասախօսութեան առանց Գիմնազիայի վկայագրի և քննութեան։ Այս ևս հանդանալի էր։ Գէորգ Աբովեանցն հարցաքննութեան հրաւիրուեցաւ, չնայելով որ Գիմնազիայից բարձր տեղեր աւարտած էր իր ուսման ընթացքը. չնայելով որ իր դասակիցներին առաւել բարձր աստիճանի էին կան նայրել առանց քննութեան, չնայելով որ Սեմինարիեց (հոգևոր ուսումնարան ռուսական) որ ցած աստիճան է, աւարտածները, Գիմնազիայի բարձր դասատներումը ուսուցիչ են նշանակուած, այն ինչ Գէորգ Աբովեանցը հրաւիրվում է հարցաքննութեան։ Ցոյց է տալի Աբովեանը այս իրողութիւնները, բայց Տեսչութիւնը չէ ուզում լսել։ Վերջապէս յանձնառու է լինում քննութեան ենթարկուելու, այն պայմանաւ, որ եթէ գերազանց լինի իրանց ուսուցիչից, նորա տեղն իրան յանձնուի. առաւել գրգռվում է Գիմնազիայի ուսումնական կառավարիչը. որովհետև այն գիտութեան այբ ու բենից զուրկ Նադէժդին ուսուցիչը (Գիմնազիայի) իր ձեռնասունն էր։ Քննութեան մէջ շատ գերազանցում է Աբովեան, ստանում է մեծ գովութիւն և շնորհակալութիւն բարեմիտ օտարազգի գիտնականներից. երբ նշանակվում է փորձառութեան դասախօսութիւն նոյն Գիմնազիայի դասատան մէջ. Աբովեանց համակրվում է աւելի և ստանում է Նեվերովից վկայական, համար 651. 1863 Թուականին Մարտ ամսոյ 27ին, որով իրաւունք է տալի ըստ կարգի և կանոնի. որ գերազանց երևեցաւ աշխարհագրական գիտութեանց մէջ և կարող է համարձակ ուսուցանել կայսերական դպրոցներում։

Մոռացայ ասել որ նախ քան այս իրողութիւններն, երկու տարի առաջ, այն է 1863 Թուականին, Գէորգ Աբովեանցը կարգվում է Ռուսաց գիմնազիական ուսումնարանումը Հայոց լեզուի և կրօնի ուսուցիչ. այս տեղ տեսնում է որ Հայոց մանկունքը շատ զուրկ են մնում իրանց հայրենի լեզուից և կրօնական հասկացողութենից, ուստի նախապէս սէր զարթուցանելով մանկանց մէջ, ապա դառնում դէպի ուսումնարանի կառավարիչն (Ժելիխովսքի) որ ոչ ինչ յառաջադիմութիւն չէ կարելի հայրենի լեզուի մէջ շա-

բաժը երկու դասով — մի լեզուի և մի կրօնի — : Նորա խոստանում են աւելացնելու դասերը։ Յետոյ նկատում է Արովեանցն, որ հաղորդութեան ժամանակը Հայ մանկանց տանում են ռուսական Սէօն անուանեալ եկեղեցին հաղորդութեան. չէ համբերում, բռնում է մանկանց ձեռքից և բերում է Հայոց Վանք անուն եկեղեցին հաղորդելու։ Միւս անգամ խօսում է Ռուսաց կրօնի ուսուցչի և նոյն ուսումնարանի կառավարչի հետ այս մասին. դորա կամենում են դեռ միտք հաճել, ասա ասում են թէ երեխայքն են դնացել։ Այս իրողութիւններից յետոյ արձակվում է Արովեանը նոյն դպրոցից և կարգվում է նորա տեղը Մանդինեանց տէր Ստեփանն, անշուշտ սորա թուլութիւնից օգուտ քաղելու յուսով։

Այսօրինակ օտարաց որոգայթներից ազատուելով Գ. Արովեան, մնում էր նորան ընտանի թշնամիներից և մի քանի օտարամիտ հայերից ազատելու իւր վարձատրութիւնն, ի ցաւ սրտի հայրենասիրաց։ Ներսիսեան Ազգային Հոգևոր դպրոցի Տեսուչ Գօնդոյովն արգիլում է դպրոցում ազգային երգ երգելու, իբրև վտանգաւոր. և ասա թէ Գէորգ Արովեանն ազատ մտքեր է տարածում աշակերտաց մէջ Հայոց Պատմութեան դասախօսութեան ժամանակ, և ահա շնորհիւ Հոգաբարձու Նագիրով* Ռոմանոսի՝ Գէորգն արձակվում է դպրոցից 1866 թուականին. և Նոյեմբեր ամսոյ 1ին՝ չորեքշաբթի երեկոյեան ժամը 8ին (ըստ եւրոպական) անյայտանում է . . . ։

Այսպէս ահա գնալով ինքը տանում է իւր հետ բոլոր բարեմիտ անձանց սրտերը, կիսատ թողնելով իւր աշխատասիրած Հայկական Պատմութիւնը և Աշխարհագրութիւնը։ Ի հարկէ կ՚անցնին տարիներ և դարեր, բայց չեն մոռացուիլ Գ. Արովեանի յիշատակն. կը ծլին, կը ծաղկին այն մանուկ սերունդներն և կը պտղաբերին այն սերմերը, որ ցանել է նոցա սրտերի մէջ։

Պարոն Գէորգ Արովեանցն դպրոցի դաւաճանողներից արձակուելուց յետոյ, սկսում է գրել իւր արձակուելու պատմութիւնն

* Այն գեղեցիկ նկարագրէ՝ Նագիրովի և Գօնդոյովի արարքն ըստ ինքն հրատարակել, որ սոսկում ազատնալնդ ընթերցողաց։ Ծ. Խ.

և իբր բողոք ներկայացնել հասարակաց դատաստանին, բայց չաւարտած անյայտանում է։ Թէև թերի, արժան ենք համարում կցել իւր կենսագրութեան հետևեալն իւր ձեռքով գրուած։

«Ընդունվում եմ ես Հայոց Ազգային Հոգևոր դպրոցումն անցեալ տարուայ սեպտեմբեր ամսոյ վերջին, Հայոց Պատմութեան և ընդհանուր Աշխարհագրութեան ուսուցիչ երրորդ և չորրորդ դասատուններումն, իրաքանչիւր առարկաներից իրաքանչիւր դասատան մէջ շաբաթն երկու դաս, այն էլ շաբաթ և երկուշաբթի օրերումն, որոց մէջ գրեթէ Հայոց եկեղեցական տօներն են պատահում. այս ոչ ինչ. Տեսուչն տալիս է ինձ և հրամայում, որ ես Հայոց պատմութիւնն աւանդեմ Շահնազարեան վարդապետի «Ծրագրի» վրայ, իսկ ընդհանուր Աշխարհագրութիւնն «Գրուբէի» «ձեռնարկի վրայ։ Ես արդէն սկիզբն նկատելով աշակերտաց գիտութեան չափն՝ ասացի Պ. Գօնդոյովին, թէ այդ ձևով անկարելի է աշակերտաց բան սորվեցնել, որովհետև հիմք չկայ, վասն զի ինչպէս կարող եմ աշակերտաց պատմել և հասկացնել Անգղլիոյ ծովային զօրութիւնը, վաճառականութիւնը, արհեստագիտութեան չափն ու մեծութիւնն, երբ նոքա չեն իմանում թէ ինչ է Անգղլիան, որ տեղ է, ծովի մէջ է նա և թէ ցամաքի, ծոցերով և ծովային խորշերով կտրուած է, թէ ոչ. մէկ խօսքով նախագիտելիքը առանց հիմքի, կարծեմ, հաստատուն չէ կարող լինիլ։ Այսպէս են ահա Պ. Գօնդոյովի բոլոր մտքերը, որ շատ և շատ խախուտ են և ցնորական։ Ես ասել եմ, Տէր Տեսուչ, Պատմութիւնն առանց աշխարհագրական տեղեկութեանց հիմնաւոր չէ կարող լինիլ, այլ պիտոյ է աշխարհացոյցներ. Հայաստանի մասին գոնէ նորա գլխաւոր լեռների, գետերի, նահանգների, նախարարութեանց, գաւառների, գլխաւոր քաղաքների և կամ մեհեանների տեղերն պէտք է ցոյց տալ։ Այն ինչ Պ. Տեսուչը բարկացել է և միայն ասել, այն ևս ոչ թէ հայերէն այլ ռուսերէն. — Ի՞նչ Հայաստան, ի՞նչ նախարարութիւն և այլն . . . ։»

Պ. Գ. Աբովեանցի անակնկալ անյայտանալուն վրայ, նոյն ժամանակ զանազան հրատարակութիւններ եղած են Ժամանակ հանդիսի մէջ (թիւ 110 — 1867). Մասիսի փոքրիկ թերթին մէջ (թիւ 18 — 1867). Մանզումէի Էֆքեարի մէջ նոյն թուականին (230–290 և 310 թիւերուն մէջ) որ հետաքրքիր ընթերցողն կարող է ձեռք բերել և կարդալ և մենք հարկ չենք տեսնում մի առ մի յառաջ բերել մեր սոյն համառօտ կենսագրութեան մէջ։

* * *

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան NL0793878

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

Մեծքեռ 20 ղրշ

Զատիկ (Վոլթեռ) ... 5.
Քիլտոն ... 5.
Միքրօ—Մեգաս, Ժանօ եւ Քօլէն, Ճերմակ ու Սեւ (Վոլթեռ) ... 4.
Վերթէր (Կեօթէ) ... 8.
Մենաստանի աղօթին (Ց. Պոմոն) ... 3.
Սէվիլյի սափրիչը (Պոմարշէ) ... 3.
Գաղտնիք Փարիզի (Էօժէն Սիւ) 8 հատոր ... 96.50
Հազար ու մէկ գիշերներ 6 հատոր ... 74.50
Երեք հրացանակիրք (Ա. Տիւմա) 3 հատոր ... 36.
Քսան տարի ետք » 4 » ... 46.50
Պրաժլոն դերկոմս » 12 » ... 115.
Ամօրի » ... 16 50
Իվանհօէ (Վ. Սքոթ) 3 հատոր ... 29.
Անիծեալն (** Էրլօմ) 4 հատոր ... 38 25
Ամուրիի մը երազները (Իք. Մարվէլ) ... 6 50
Աշխարհի շրջանն ութսուն օրուան մէջ (Ժ. Վէրն) ... 12.75
Խորհրդաւոր կղզի (Ժ. Վէրն) 3 հատոր ... 28.
Մանկտիք (Շանֆլէօրի) ... 9.25
Սիպերիականի մը յիշատակք (Ժ. Կլառսօ) ... 10.
Հայկական նամականի (Վ.րմր) ... 12 25
Մանր վէպեր ու զաւեր տղոց համար ... 7.
Բանալի հայերէն շարադրութեան ... 2.25
Գիտելիք եւ պարտիք տղոց ... 7.
Ընդհանուր Պատմութիւն համառօտ (Մաս Ա.) Հատոր Ա. ... 5 50
» » » (Մաս Բ.) » Ա. ... 11 50
» » » » Բ. ... 16 25
Նոր ընթերցարան Բ. տարի ... 4 75
Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը ... 20.
Արեւելեան Մամուլ. 11 տարուան 1871—1881 ... 600.
Համառօտ պատմութիւն Ռուսական Գրականութեան (Ա. Պըշլեն) ... 10.